ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, ddmashen.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2021թվականի N 5

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԴԴՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ վարչապետի աշխատակազմին, առցանց, օգնության խնդրանքով է դիմել /դիմումի ամսաթիվ և համար՝ 23.01.2021թ., հ.97647/ Դդմաշեն համայնքի բնակչուհի Հայկանուշ Չերքեզյանը: Վերը նշված դիմումը վերահասցեավորվել է Գեղարքունիքի մարզպետարան, այնուհետև մարզպետարանի կողմից վերահասցեագրվել է Դդմաշենի համայնքապետարանին /մտից ամսաթիվ՝ 09.02.2021թ./:

2021 թվականի փետրվարի 12-ին Դդմաշենի համայնքապետարանում կայացած համայնքի ավագանու նիստում քննարկվել է քաղաքացու դիմումը՝ դիմումատուի մասնակցությամբ: Քննարկման ժամանակ պարզվեց, որ դիմումատուն ցանկացել է առցանց ներկայացնել /լրացնել/ դիմում ՀՀ կառավարության կողմից հատատված կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման միջոցառումներից որևէ մեկից օգտվելու նպատակով, սակայն, իր կամքից անկախ լրացրել է մեկ այլ դիմում: Այնուհանդերձ, դիմումատուին իր կամ ընտանիքի այլ անդամի /ամուսնու/ համար առաջարկվեց համապատասխան աշխատանք, որից նրանք հրաժարվեցին՝ տարբեր պատճառներով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայկանուշ Չերքեզյանի դիմումը թողնել անպատասխան՝ իրենց համաձայնությամբ և առաջին իսկ ցանկության դեպքում իրեն կամ ընտանիքի այլ անդամին /ամուսնուն/ ապահովել համապատասխան աշխատանքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ավետիսյան Տիգրան

Թադևոսյան Գառնիկ

Հովհաննիսյան Գուրգեն

Ղարիբյան Էդիկ

Մելքոնյան Զավեն

Սարգսյան Ժաննա

Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան